

ԱՆԳԼԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սույն հոդվածի նպատակն է պատմաբանական տեսանկյունից ներկայացնել Աստվածաշնչի անգլերեն թարգմանությունների ակունքները: Նախ քննվում է Աստվածաշնչի անվանման ծագումը, ապա խոսվում է Աստվածաշնչի անգլերեն թարգմանությունների նախնական փորձերի մասին: Ավելի հանգամանորեն քննարկվում են Աստվածաշնչի ութ հիմնական թարգմանությունները: Վերջում, շարադրվածի հիման վրա, արվում է եզրակացություն: Պատմական տարեթվերը, անձնանունները և այլ մանրամասներ մեծամասամբ թարգմանված կամ փոխառնված են տարբեր աղբյուրներից, որոնց ամբողջական ցանկը ներկայացված է վերջում: Մի շարք տեքստային և թվային տվյալներ քաղված են Ինտերնետից:

Սուրբ Գրքի «բիբլիա» անվանումը հունարեն ծագում ունի (1, էջ 111): Հնում մամակագրության համար օգտագործվող պապիրուսի ցողունը հիմք է դրել Սուրբ Գրքի հունարեն անվանմանը՝ βιβλὸς βιβλίον [բիբլոս, բիբլիոն] - Գիրք Գրոց (տե՛ս Մատթ. 1.1, Ղուկ. 4.17): Սուրբ Գրքերը, որ ընթերցում էին հունախոս քրիստոնյաները, բնականաբար կոչվում էին τα βιβλία, [թաբիբլիա] այսինքն՝ գրքեր: Ինչևէ, այս անվանումն առաջինը կիրառել է Հովհան Ոսկեբերանը՝ V դարում: Ժամանակի ընթացքում այս անվանումը հունական ծագում ունեցող այլ բառերի հետ թափանցում է արևմտյան եկեղեցու բառապաշարը: Սկսում է կիրառվել նաև մեկ այլ տերմին՝ bibliotheca divina, որը նշանակում է «աստվածային գրապահոց»: Այն առաջինը կիրառել է Հերոնիմոսը՝

Աստվածաշունչը կոչվում է նաև αι γραφαι [հայ գրաֆայ] այսինքն՝ «գրքեր» կամ «սուրբ գրքեր», ռուսերեն՝ կո՛րո՛վո՛ւ, անգլերեն՝ the Scriptures: Պողոս առաքյալը αι γραφαι ձևը օգտագործում է ընդհանրապես Հին Կտակարանի մասին հիշատակելիս, և որ այն կարող է «...իմաստուն ընել քեզ

փրկուելու Զրիստոս Յիսուսին վրայ եղած հաւատքովը» (տե՛ս Բ ՏԻՄ. 3:15-16): Ավետարաններում և Գործք Առաքելոցում բերվում է այդ նույն արտահայտությունը (տես Սաք. 21:42, Ղուկ. 24:32, Հովհ. 5:39, Գործք 18:25): Մեկ այլ տարբերակ է դ ԴՐԱՓԵ [գրաֆե] տերմինը, որն օգտագործվում է Նոր Կտակարանում՝ գրքի միայն որոշակի հատված նշելու իմաստով (տե՛ս Ղուկ. 4:21, Հովհ. 20:9, Հակ. 2:8 և այլն):

Հին և Նոր Կտակարաններ. Պողոս առաքյալն առանձնահատուկ ուշադրության արժանի տեղում Մովսեսի Հնգամատյանը, եթե ոչ ամբողջ հրեական կանոնը, անվանում է «Հին Կտակարան» (տե՛ս Բ Կորնթ. 3:14): Նույն գլխում ինքն իրեն և իր համագործակիցներին բնորոշում է որպես «նոր կտակարանի պաշտօնեաներ» (տես Բ Կորնթ. 3:6): Եվ հենց այս անվանումներով էլ՝ դ *παλαια διαθηκη* [պալայա դիաթեքե]՝ «Հին Կտակարան» և դ *καινι διαθηκη* [կայնե դիաթեքե]՝ «Նոր Կտակարան»՝ երկրորդ հարյուրամյակի վերջում եկեղեցու հայրերը կոչում են Սուրբ Գրոց հրեական և քրիստոնեական գրքերը (1, էջ 111):

Հին Կտակարանի բնագիրը հիմնականում գրվել է եբրայերեն (2, էջ 1), իսկ Նոր Կտակարանն ամբողջությամբ գրվել է հունարեն (2, էջ 13): Աստվածաշունչը կամ նրա մի մասը թարգմանվել են աշխարհի մոտ 1200 լեզուներով: Աստվածաշնչի «սիրտ» համարվող Հովհ. 3:16 խոսքը թարգմանված է հազարից ավելի լեզուներով: Ստորև բերվում է դրանցից միայն յոթը:

Հայերեն.

Վասն զի Աստուած այնպէս սիրեց աշխարհը, մինչեւ իր Միածին Որդին տուաւ, որպէս զի ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, յապա յավիտեանական կեանք ունենայ (8, էջ 126):

Ռուսերեն

Ибо так возлюбил Бог мир, что отдал Сына Своего единородного, дабы всякий, верующий в Него, не погиб, но имел жизнь вечную.
Անգլերեն.

For God so loved the world that He gave His only begotten Son, that whoever believes in Him should not perish but have everlasting life (6, էջ 1077).

Գերմաներեն

Also hat Gott die Welt geliebt, dass er seinen eingebornenen Sohn gab, auf dass jeder, der an ihn glaubt, nicht verloren gehe, sondern ewiges Leben habe.

Ֆրանսերեն

Car Dieu a tellement aime le monde, qu'il a donne son Fils unique, afin que quiconque croit et lui ne perisse point, mais qu'il ait la vie eternelle.

Լատիներեն

Sic enim dilexit Deus mundum, ut Filium suum unigenitum daret: ut omnis qui credit in eum, non pereat, sed habeat uitam aeternam.

Հունարեն

Οντως γαρ ηγαπησεν ο Θεος τον κοσμον, ωστε τον Υιον μονογενη εδωκεν, ινα πας ο πιστευνων εις αυτον μη αποληται αλλ εζη ζωην αιωνιον.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ընդհանուր առմամբ համաձայնություն կա այն հարցի շուրջ, որ քրիստոնեության մոտքը Բրիտանական կղզիներ եղել է մեր թվարկության II հարյուրամյակում հավանաբար առաքելական ժամանակաշրջանից ամնիջապես հետո: Հայտնի չէ, թե ով է առաջինը քրիստոնեական հավատքը բերել Բրիտանիա և թե որքան լայնածավալ է եղել դրա ընդունումը այդ ժամանակ: Հայտնի են քրիտանացի մի քանի մարտիրոսներ, Բրիտանիան իր պատվիրակներն է ունեցել վաղ եկեղեցական խորհուրդներում, սակայն, ինչպես պրոֆեսոր Չարլզ Օմենն է ասում. «Երկրորդ հարյուրամյակից չորրորդը ընկած ժամանակահատվածում կրոնական մոտիվներով ստեղծած և Բրիտանիայով մեկ սփռված հարյուրավոր հուշարձաններից բոլորը զուտ հեթանոսական են: Թվում է, թե ամեն պատճառ կա հավատալու, որ արևմուտքի այս հեռավոր անկյունի բնակչության գերակշռող մասը հեթանոս է մնացել շատ ավելի երկար ժամանակ, քան այլուր» (3, էջ 1356): Սուղ տվյալներ կան, թե Աստվածաշնչի ինչ տարբերակներ էին ընթերցվում այդ հեռավոր ժամանակաշրջանում: Այս շրջանին է պատկանում բրիտանացու՝ հերետիկոս Փելագիոսի կողմից գրված ամենահին գիրքը՝ «Մեկնություն Պողոս առաքյալի

թղթերի»: Փեղագիտը վաղ հասակում թողել է Բրիտանիան և այդ գիրքը գրել է Հռոմում:

Անգլիայում քրիստոնեության մասին փաստագրական տեղեկությունը սկիզբ է առնում միայն 597թ.: Զենթրբերիի Սբ. Օգոստինոսից: Հռոմի Պապ Գրիգորիոսը (590 - 604 թթ.) 476թվականին ձեռնամուխ է լինում Հռոմի անկման հետևանքով գոյացած գոթա-հռոմեական բնակչության քրիստոնեացման: Նրա ազդեցության սահմաններն ընդլայնվում և ներառում են Իտալիան, Իսպանիան, Գալիան և Անգլիան (4, էջ 765): Նա նվիրատվություն է անում Զենթրբերիի նորաստեղծ եկեղեցուն. երկհատորյակ գրիգորյան Աստվածաշունչը, Ավետարանների երկու կրկնօրինակ, երկու Սաղմոսարան, Թղթերի և Ավետարանների բացատրական ձեռնարկ կիրակնօրյա ընթերցման համար: Այս ամենը զարդարված էին արծաթով և ոսկով: Այսպիսով հիմք է դրվում Բրիտանիայում Սուրբ Գրոց պատմությանը: Ինչպիսի՞նք Աստվածաշունչ կարող էր ուղարկված լինել Հռոմի Պապ Գրիգորիոսը Օգոստինոսին: Այն պետք է որ լիներ լատիներեն Աստվածաշունչ՝ այսինքն ոչ եբրայերեն Հին Կտակարան և ոչ էլ հունարեն Նոր Կտակարան: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այս փաստին: Մեր թվարկության III դ. արդեն հռոմեական կայսրության արևմտյան հատվածի բնակչության զգալի մասը չափազանց թերի էր տիրապետում հունարենին: Եթե նրանք ունեին Աստվածաշունչ, ապա այն պետք է լիներ լատիներեն, քանի որ այս լեզվով էին խոսում միջերկրածովյան ավազանի ժողովուրդները:

Աստվածաշնչի ամենահայտնի և հեղինակավոր թարգմանությունը Սբ. Հիերոնիմոսին մասնակցությամբ 383 - 405 թթ. կազմված լատիներեն Աստվածաշունչն է՝ այսպես կոչված VULGATE-ն, [վալգեյթ] որ նշանակում է «հանրայնացված» կամ «ընդհանրացված»: Այս թարգմանությունը արվել է Հին Կտակարանի եբրայերեն և Նոր Կտակարանի հունարեն բնագրերից: Շուտով VULGATE-ն դառնում է արևմուտքի Աստվածաշունչը, միջնադարյան եկեղեցու հիմնասյունը: Իր թերություններով հանդերձ, ավանդական կիրառության շնորհիվ այս տարբերակը շատերի համար դառնում է սրբագործ:

Աստվածաշնչի թարգմանությունն Անգլիայում սկիզբ է առնում VII դ. վերջից, երբ Ուիթբիի վանական Զեդմոնը կատարում է Սուրբ Գրոց որոշ

հատվածների տաղաչափական բառափոխում: Անկասկած, դրանք նախապես արվել են բանավոր, ասմունքի և այլ երգերի տեսքով: Այս մասին է վկայում Բիդը (672 -735թթ.) (4, էջ 748), նկարագրելով Քեդմոնի ասմունքը. «Ակզբում նա երգեց աշխարհի արարման և մարդկության ակունքների մասին, ապա՝ եգիպտական լծից Ավետյաց երկիր արշավելու, երգեց Քրիստոսի մարդեղացման, տանջանքների, խաչելության, համբարձման, ապա Սուրբ Հոգու գալստյան և առաքյալների մասին» (3, էջ 1357) : Քեդմոնը վախճանվում է 680թ.:

VIII դ. բրիտանացի մեծագույն գիտնականը Վերապատվելի Բիդն է: Նրանից հետո ընկած հինգ հարյուր տարիների ընթացքում Բրիտանիան չի ունեցել Աստվածաշնչի մասին նրան հավասար գիտելիքներ ունեցող մեկին: Հիշարժան է իր իսկ խոստովանությունը. «Ես իմ ամբողջ ուշադրությունը դարձրեցի Սուրբ Գրոց ուսումնասիրմանը՝ քահանա դառնալուց մինչև իմ կյանքի հիսունիններորդ տարին (731թ.)»: Բիդը մեծամասամբ շարադրում է լատիներեն, սակայն ձեռնամուխ է լինում Ավետարանների անգլոսաքսոներեն թարգմանությանը: Եվ, ի դեպ, իր մահվան իսկ օրը թելադրում էր Հովհաննեսի Ավետարանը: Թարգմանությունից ոչինչ մեզ չի հասել:

Սբ. Ալդելմը (մոտ 709 թ.) թարգմանել է Սաղմոսարանը, բայց այս թարգմանությունը նույնպես գոյություն չունի: IX դ. ի վեր գոյություն ունեն նաև այլ հին անգլերեն բառափոխումներ, հատկապես Ծմնդոց, Ելից և Դանիելի գրքերից: Կան նաև բազում բանաստեղծություններ աստվածաշնչյան թեմաներով, օրինակ՝ Սինեվուլֆի «Քրիստոս» ոտանավորը: Եղել է նաև Հուդիթի պատմության տաղաչափական բառափոխումը: Անգլիայի Ալֆրեդ Մեծ թագավորը (871 - 899թթ.) Բրիտանիայի հպատակների համար իր օրենքների հայտնի կոդեքսում որպես նախաբան գործածել է Տասը պատվիրանների իր իսկ կատարած անգլոսաքսոներեն թարգմանությունը: Այսօր գոյություն ունեցող ամենավաղ ծագումով անգլո-սաքսոներեն Ավետարանները թվագրվում են մոտավորապես X դարով: Սաղմոսարանը, որը կիրառվում էր հանրային պաշտամունքներում և անհատական աղոթքներում, IX դ. սկսվել և X դ. ամբողջովին թարգմանվել էր: Այս շրջանում Բրիտանիայում գործածվող լեզուն կարելի է նկարագրել որպես անգլերենի անգլո-սաքսոնական

նախալեզուն, որը բավականին տարբերվում է այսօրվա անգլերենից: Այս մասին է վկայում 995-վ թվագրվող գտածո մի ծեռագիր. որում Հովհաննես 3.16 համարը ունի հետևյալ տեսքը. "God lufode middan-eard swa, dat he saede his an-cennedan sunu, dat nan ne forweorde de on hine gely ac habbe dat ece lif": XI դ. է վերագրվում էլֆրիկի կողմից կատարված Heptateuch*-ի ազատ թարգմանությունը: Մասամբ չափածո, մասամբ արձակ, ազատ ոճով թարգմանվել են Նոր Կտակարանի գրքերը XIV դ.: Սակայն սրանցից և ոչ մեկը, ոչ էլ սրանցից առաջ եղածները նպատակ չէին հետապնդում Գրոց ճշմարիտ խոսքը տալ հասարակ մահկանացուների:

Աստվածաշունչն ամբողջապես անգլերեն թարգմանելու գաղափարը պատկանում է Ջոն Ուիքլիֆին (1330 – 1384) թթ.: Ուիքլիֆը հայտնի է որպես Օքսֆորդի աստվածաբան և կրոնական բարեփոխիչ: Նրա համար հավատքի օրենքը և բարոյականության գերագույն չափանիշը Աստվածաշունչն է և ոչ թե Պապի կամ եկեղեցականների հեղինակությունը: Առանց այդ էլ բաժանումների և կաշառակերության պատճառով թուլացել էր եկեղեցու ազդեցությունը: Աստվածաշնչի խոսքերը, նրա կարծիքով, պետք է հասու լինեին բոլոր մարդկանց: Այս կարծիքը հետագայում դառնում է բողոքականների դիրքորոշման բնութագրիչ կողմերից մեկը: Թեև, հավանաբար, Ուիքլիֆն անձամբ թարգմանություն չի կատարում, սակայն իր գաղափարները շուտով բռնկում են իր հետնորդներին, որոնք իրականացնում են Աստվածաշնչի երկու թարգմանություն: Առաջինը, որը կազմվում է Ուիքլիֆի կենդանության օրոք, հավանաբար 1380 – 1384 թթ., խիստ բառացի էր: Իսկ երկրորդը՝ 1390-ականներին կատարված էր ավելի ազատ և խոսակցական անգլերենով: 1380 թ. հրատարակության լեզվի մասին պատկերացում կազմելու համար դարձյալ մեջբերում ենք Հովհաննես 3.16-ը. "For god loued so the world; that he gaf his oon bigetun sone, that eche man that beleueth in him perisch not: but haue euerlastynge lif," Մինչև մեկ դար անց Թինդեյլի երևան գալը, սա Անգլիայում գոյություն ունեցող միակ Աստվածաշունչն էր: Այս թարգմանության նախաբանի հեղինակը՝ հավանաբար Ջոն Փերվին, այսպես է բնութագրում Աստվածաշունչ թարգմանողի կարիքը. "A translator hath great need to study well the sense both before and after, and then also he hath need to live a clean life and be full devout

in prayers, and have not his wit occupied about worldly things, that the Holy Spirit, author of all wisdom, knowledge and truth, dress him for his work and suffer him not to err**** (7, էջ 528).

Որպես աստվածաբանական ուսումնասիրությունների մնուշ, մեզ են հասել XIV դ. պատկանող 170 աստվածաշնչյան ձեռագրեր (3, էջ 1358):

Վերածննդի հետ հետաքրքրության նոր ալիք է բարձրանում աստվածաշնչյան տեքստերի նկատմամբ: 1516թ. Բազելում էրասմուսը հրատարակում է հունարեն Նոր Կտակարանը իր նոր՝ լատիներեն թարգմանության հետ (5, էջ 22): Հունարենի և եբրայերենի նոր ուսումնասիրությունները գիտնականներին հնարավորություն են ընձեռում ավելի խորը թափանցելու Աստվածաշնչի տեքստի էության մեջ: Էրասմուսի հրատարակությունը բավականին նշանակալի է Աստվածաշնչի հետագա թարգմանությունների համար: 1384 թվականից 1524 թվականը՝ մինչև Թինդեյլի թարգմանական տարբերակի հրապակի իջնելը, տեղի են ունենում մի շարք նշանակալի իրադարձություններ, որոնք մեծ ազդեցություն են թողնում Եվրոպայի ամբողջ մտավոր և հոգևոր մթնոլորտի վրա: 1453թ. ընկնում է Արևելյան Հռոմեական կայսրության մայրաքաղաք Կոնստանդնուպոլիսը: Բազմաթիվ հույն գիտնականներ իրենց թանկարժեք ձեռագրերով տեղափոխվում են արևմուտք: 1456թ. ի հայտ է գալիս առաջին տպագիր Աստվածաշունչը, սկիզբ դնելով արևմտյան քաղաքակրթության մի նոր դարաշրջանի: Այս դարաշրջանում է Քրիստոֆոր Կոլումբոսը հայտնաբերում Ամերիկան: 1517թ. Լյութերը եկեղեցու դռան վրա գամում է իր ինսուրնիինգ թեզերը: Սա մաս Զենրի VIII-ի գահակալման ժամանակաշրջանն է (1509 – 1547):

Ուլիխան Թինդեյլը (1494 – 1536 թթ.) կրթություն է ստացել Օքսֆորդի համալսարանում, տիրապետում էր յոթ լեզուների: Թինդեյլը միշտ ցանկացել է հունարեն և եբրայերեն բնագրերից անգլերեն թարգմանել Աստվածաշունչը: Իր թողոքական հայացքների պատճառով Թինդեյլին Անգլիայից վտարում են Գերմանիա, որտեղ նա ծանոթանում է Մարտին Լյութերին (1809 – 1865թթ.): Վերջինս 1522թ. հրատարակում է Աստվածաշնչի իր գերմաներեն տարբերակը, մի փաստ, որը ևս մեկ անգամ ոգեշնչում է Թինդեյլին իրագործել իր իղծը: Եվ այսպես, 1525թ. Գերմանիայի Կոլոնիա քաղաքում լույս է տեսնում Թինդեյլի

առաջին թարգմանությունը: Սա առաջին անգլերեն Նոր Կտակարանն է, որն ուղղակիորեն թարգմանվել է հունարենից, և ոչ թե լատիներենից: 1526թ. Աստվածաշնչի տպագրված առաջին օրինակները մաքսանենգ ճանապարհով բերվում են Անգլիա: Դրա շրջանառությունն Անգլիայում տակավին անօրինական էր, քանի որ այն եկեղեցական իշխանավորների հավանությանը չէր արժանացել: Ավելին, այն պարունակում էր խոսքի անընդունելի շրջադարձեր. օրինակ՝ baptism-ի փոխարեն օգտագործվում է washing, charity-ի փոխարեն՝ love, church-ի փոխարեն՝ congregation, priest-ի փոխարեն՝ elder և այլն: Սրանցից, ինչպես Թինդեյլն է ասում, մաքրված էր սխալ արարքների, անազնվության և կարծրացած կրոնապետության դարավոր ախտը: Նա շարունակում էր վերանայել Նոր Կտակարանի իր թարգմանությունները, որոնք հաջորդաբար, նորանոր խմբագրությամբ լույս են տեսնում 1533, 1534, և 1535 թվականներին: 1534-ի հրատարակության լեզվի մասին պատկերացում կազմելու համար մեջբերում ենք նույն Հովհաննես 3.16-ը. "For God so loveth the worlde, that he hath geven his only sonne, that none that believe in him, shuld perisshe: but shuld have everlastynge lyfe." Հիշարժան է, որ Հակոբ Թագավորի տարբերակի 80%-ը բխում է Թինդեյլի Աստվածաշնչից: Թինդեյլի մի ընկերոջ միջոցով նրան խաբեությամբ համոզում են վերադառնալ Անգլիա, որտեղ և բանտարկում են: Հենրի VIII-ի հավանությամբ 1536թ. հոկտեմբերի 6-ին Թինդեյլին խարույկի վրա այրում են: Նահատակվելիս նրա շուրթերից հոսում էին հանրահայտ դարձած խոսքերը. «Տե՛ր, բացիո Անգլիայի թագավորի աչքերը»: Եկեղեցական իշխանավորների դաժան պայքարի արդյունքում Թինդեյլի թարգմանություններից մնում է մի երկու պատահիկ:

Թինդեյլի զոհվելուց անմիջապես հետո՝ 1537թ. ի հայտ է գալիս այսպես կոչված անգլիացիների լեզվով տպագրված առաջին ամբողջական Աստվածաշունչը՝ Մայլզ Քավերդեյլի (1485 – 1568թթ.) աշխատասիրությամբ: Այս Աստվածաշունչը հիմնված է լատիներեն VULGATE-ի, անգլերեն Թինդեյլի և գերմաներեն Մարտին Լյութերի տարբերակների վրա: Քավերդեյլն առաջինն է, որ Հին Կտակարանից առանձնացնում է պարականոն գրքերը (ապոկրիֆ) և գետնելում դրանք հավելվածում: Նրա այս տարբերակը նաև առաջինն է, որում

առկա է յուրաքանչյուր գլխի ամփոփագիր, իսկ գլուխների հակիրճ նախաբանով այն տարբերվում է լատիներեն VULGATE-ից:

1537թ. երևան է գալիս մի Աստվածաշունչ աշխատասիրությամբ Ջոն Ռոջերսի թիմոյեյի գործընկերոջ: Ռոջերսի 1540 և 1541թթ. խմբագրություններն ունեին նախաբան, որը կազմված էր եպիսկոպոս Քրենների կողմից: Այդ իսկ պատճառով էլ այս Աստվածաշունչը հայտնի է որպես Քրենների Աստվածաշունչ: Կարծիք կա, որ այս Աստվածաշունչի 2/3-ը թիմոյեյի, իսկ 1/3-ը Քավերդեյի տարբերակից է: Հետագա տպագրություններում առաջին անգամ հանդիպում ենք մի արտահայտության, ըստ որի սույն Աստվածաշունչը նախատեսված է եկեղեցիների կիրառության համար, կամ ինչպես բնօրինակում է “This is the Bible appointed to the use of churches”:

Ջոն Ռոջերսը ծեռնարկում է մեկ այլ տարբերակ Քավերդեյի 1537թ. տարբերակի ազդեցության տակ: Այն կոչվում է Մեծն Աստվածաշունչ՝ the Great Bible, քանի որ սրա էջերի մեծությունը 23 x 38 սմ է, իսկ տեքստային մասինը՝ 22 x 33 սմ: 1538թ. հրապարակված արքունական հրամանով յուրաքանչյուր թեմի հանձնարարվում էր ունենալ անգլերեն Աստվածաշունչի նույն օրինակը: Մեծն Աստվածաշունչն էլ հենց կիրառվում է ի գործադրումն այս հրամանի: 1539թ. հրատարակության լեզվի մասին պատկերացում կազմելու համար տեսնենք, թե ինչ տեսք է ստանում վերոհիշյալ հատվածը Հովհաննեսի Ավետարանից. “For God so loved the worlde, that he gaue his only begotten sonne, that whosoeuer beleueth in him, shulde not perisshe, but haue euerlasting lyfe.” Բայց քանի որ շուտով ի հայտ է գալիս Սուրբ Գրքի մի ավելի ստույգ թարգմանություն, 1569թվականից դադարեցվում է Մեծն Աստվածաշունչի վերահրատարակումը: Ռոջերսը նահատակվում է 1555թ.: Լ. Ա. Ուիգելը նշում է, որ «Ռոջերսի Աստվածաշունչը հիմք է դառնում հետագա բոլոր լիազոր տարբերակների համար»:

Սինչև 1611թ. հրատարակված այսպես կոչված «Լիազորված տարբերակը» (The Authorized Version), Աստվածաշունչի անգլերեն ամենաստույգ տարբերակը համարվում է Ժնևի Աստվածաշունչը: Կաթոլիկ Մարիա թագուհու օրոք՝ 1553 – 1558թ., Անգլիայում ոչ մի Աստվածաշունչ չի

հրատարակվում: Սակայն աքսորված գիտնականների մի խումբ Շվեյցարիայում կազմում է Աստվածաշունչի մի տարբերակ, որը հայտնի է դառնում որպես Ժնևի Աստվածաշունչ: Նրանք վերջիվերջո այս տարբերակը նվիրում են Եղիսաբեթ թագուհուն: Այս տարբերակն առաջին անգամ հրատարակվում է 1560թ., իսկ 1652թ. հրատարակվում է երկրորդը: Նոր Կտակարանը խմբագրում է Ուիլիամ Ուիթինգեմը, որն ամուսնացած էր Կալվինի քրոջ հետ: Գրքի նախաբանը գրում է հենց ինքը՝ Կալվինը: Այստեղ առաջին անգամ լուսանցքներում զետեղված նշումները հղումներ են կատարում հունարեն ձեռագրերին: Սա նաև առաջին անգլերեն տարբերակն է, որտեղ առանձին համարները գրվում են մոր պարբերությամբ: 1557թ. հրատարակության լեզվի մասին պատկերացում կազմելու համար դարձյալ մեջբերենք Հովհաննես 3.16-ը. "For God so loueth the world, that he hath geuen his only begotten Sonne: that none that beleue in him, peryshe, but haue euerlasting lyfe." Այս տարբերակից էին օգտվում Շեքսպիրը, Օլիվեր Քրոմվելը և այլք: Այն Շոտլանդիայում լույս տեսած առաջին Աստվածաշունչն է: Այս Աստվածաշունչն առաջինն է, որտեղ Black Letter տառատեսակի փոխարեն օգտագործվում են հռոմեական տառատեսակները:

Ժնևի Աստվածաշունչը, որը թեև այդ ժամանակվա ամենաճշգրիտն է, Անգլիայի եկեղեցու առաջնորդների կողմից չի ընդունվում: Հարկավոր էր մի Աստվածաշունչ, որը իրավասու կլիներ կրել Անգլիայի եկեղեցու հեղինակությունը: Աստվածաշունչի մոր տարբերակ կազմելու առաջարկությունն առաջ է քաշում արքեպիսկոպոս Փարքերը, որն էլ նշանակում է հատուկ համեմատողով այդ աշխատանքը իրականացնելու համար: Համեմատողովը պետք է որպես հիմք ընդուներ Մեծն Աստվածաշունչը և այն համեմատեր երբայերեն և հունարեն տեքստերի հետ: Այս եպիսկոպոսների գիտական մակարդակը զիջում էր Ժնևի Աստվածաշունչի թարգմանիչների գիտելիքներին: 1568 – 1606թթ. ընկած ժամանակահատվածում լույս է տեսնում եպիսկոպոսների Աստվածաշունչի 19 հրատարակություն:

Վերջին երկու Աստվածաշունչները, որոնք արժե հիշատակել նախքան Հակոբ Թագավորի տարբերակի հանգամանակից քննարկումը, Հռայմս և Դուե Աստվածաշունչներն են: Այս երկուսն էլ հռոմեական ծագում ունեն և ուղղված

էին բողոքականների «սխալ թարգմանությունների» դեմ: Այս տարբերակի Նոր Կտակարանը հրատարակվում է 1582թ. Անգլիական Քոլեջի կողմից, որն այդ ժամանակ գտնվում էր Հռայմսի մոտ: Այստեղից էլ Հռայմս անվանումը: Ահա թե ինչպիսին է նույն Հովհաննես 3.16-ը այս տարբերակում. "For so God loued the vworld, that he gaue his only-begotten sonne: that euery one that beleeueth in him, perish not, but may haue life euerlasting." Իսկ Հին Կտակարանը, որը մեծամասամբ Գրեգորի Սարտինի աշխատությունն է, հրատարակվում է 1609թ.: Այն հիմնականում լատիներեն VULGATE-ի թարգմանությունն է: Եվ քանի որ Անգլիական Քոլեջն արդեն տեղափոխվել էր Դուել, Հին Կտակարանի մասը հայտնի է դառնում որպես Դուելի Աստվածաշունչ: Այս տարբերակի թերություններից է Սաղմոսների գիրքը, որն իրավամբ բնութագրում են որպես «թարգմանության թարգմանության թարգմանություն»: Այստեղ շեշտվում են քահանայական տերմինները, օրինակ՝ ապաշխարում, զղջում բառը (repentence) այստեղ թարգմանված է որպես penance: Գրքում գործածված են այնպիսի անծանոթ բառեր, ինչպիսիք են. exinaninted, donances, կամ commersation: Սարկավագ բառի փոխարեն գրված է ծառայող (minister), իսկ երեց բառը թարգմանված է քահանա: Հակոբ թագավորի թարգմանիչները օգտվում են այս տարբերակի Նոր Կտակարանից, բայց որովետև Հին Կտակարանը տպագրվում է ավելի ուշ, այն նշանակալի ազդեցություն ունենալ այլևս չէր կարող:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ Աստվածաշնչի անգլերեն թարգմանությունները և դրանց թարգմանիչներն անցել են երկար ու դժվարին ճանապարհ: Երրորդ հարյուրամյակից ի վեր սկսվել են Աստվածաշունչը թարգմանելու փորձերը, որոնք սակայն ժողովրդական լայն արծաքանք չեն գտել մինչև XIVդ, երբ Ջոն Ուիքլիֆը ի լուր աշխարհի ազդարարում է, որ Աստծո խոսքը պետք է հասու լինի բոլոր մարդկանց: Այստեղից սկիզբ է առնում Աստվածաշնչի անգլերեն թարգմանության մի նոր փուլ: Մինչև 1611թ. Հակոբ Թագավորի տարբերակի լույս տեսնելը կատարվում են անգլերեն Աստվածաշնչի ութ հիմնական թարգմանություններ: Դրանք են՝

Ցմրեթիվ	ԱՆՎԱՆՈՒՄ
1380 – 84 թթ. և 1390-ականներ	Ուիքլիֆ
1525թ., հետագայում՝ 1533, 1534, 1535թթ.	Թինդեյլ
1537թ.	Քավերդեյլ
1537թ. հետագայում՝ 1540 և 1541թթ.	Ջրենմեր
1550-ականներ	Ռոջերս՝ Մեծն Աստվածաշունչ
1560թ., հետագայում՝ 1562թ.	Ուիթինգեմ՝ Ժնկի Աստվածաշունչ
1568 – 1606 թթ.	Եպիսկոպոսների Աստվածաշունչ
1582թ. և 1609թ.	Չռայմս և Դուե Աստվածաշունչ

Որպես ամփոփում հարկավոր է նշել մի քանի փաստ ևս:

Այս ութ հիմնական և ուրիշ այլ անգլերեն թարգմանությունների որոշ պատահիկներ պահպանվել են մինչև մեր օրերը՝ անցնելով հալածանքների, անուշադրության և դարերի հորձանուտով, հաստատելով այն խոսքը, թե. «Երկինք ու երկիր պիտի անցնին, բայց իմ խօսքերը բնավ պիտի չանցնին» (Մատթ. 24.35, Մարկոս 13.31, Դուկաս 21.33), "Heaven and earth will pass away, but My words will by no means pass away".

Կարևոր է նշել նաև, որ հետագայում ավելի հին բնագրեր են հայտնաբերվում, որոնք բեկումնային ազդեցություն են ունենում Աստվածաշնչի, մասնավորապես անգլերեն Աստվածաշնչի թարգմանության գործում: Հետագայում ձեռք բերված բնագրերը, թարգմանական բազմադարյան փորձը, գումարվելով մինչև 1611թ. գոյություն ունեցող Աստվածաշնչի անգլերեն թարգմանությունների և դրանց տարբերակներին, արժեքավոր հիմք են դառնում Հակոբ Թագավորի տարբերակի ստեղծման համար:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չին անգլերենում կարելի է հանդիպել սրա biblotheca ձևին: XIII հարյուրամյակում չեզոք սեռի հոգնակի թվի biblia բառը դիտվում էր որպես իգական սեռի եզակի թվի բառ և շուտով մտնում է շրջանառության մեջ:

****Heptateuch** - Այսպես են կոչվում Աստվածաշունչի առաջին յոթ գրքերը միասնաբար:

******* The Oxford Anthology of English Literature, vol. 1, «Թարգմանիչը կարիք ունի ուսումնասիրելու նյութի իմաստը գործից առաջ և հետո, ապա պարտավոր է սուրբ կյանքով ապրել և աղոթքներին տրվել և միտքը չզբաղեցնել աշխարհիկ բաներով, որպեսզի Սուրբ Հոգին, որն ամենայն իմաստության, գիտելիքի և ճշմարտության հեղինակն է, նախապատրաստի իրեն աշխատանքի համար և գերծ պահի սխալից»:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. БИБЛИЯ – Издательство Б. ГЕЦЕ, 1939.
2. The Lord gave the Word, a study in the history of the biblical text, Malcolm H. Watts, Trinitarian Bible Society, 1998.
3. The OPEN BIBLE – Expanded Edition, 1985.
4. Библейский Справочник Геллея - 1983, Мировая Христианская Миссия, Канада, т2 765.
5. The Essential Erasmus, by John P. Dolan, 1983, NY.
6. THE HOLY BIBLE – The New King James Version, 1985.
7. The Oxford Anthology of English Literature, vol. 1.
8. ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉ - Աստուածաշունչի Լիբանանի Ընկերություն: